



COUNTERPART
INTERNATIONAL



«Շիրակ կենտրոն» կազմակերպության առաքելությունը

«Շիրակ կենտրոնի» գործունեության և հիմնական խնդիրների անբաժանելի մաս է կազմում քաղաքացիների և հատկապես սոցիալական խոցելի խմբերի, անօթևան ընտանիքների սոցիալ-տնտեսական և բնակարանային իրավունքների ու շահերի պաշտպանությունը:

Կազմակերպության առաքելությունն է նպաստել Հայաստանում ժողովրդավարության հաստատմանը, մարզերում սոցիալ-քաղաքական կարևորագույն խնդիրների լուծմանը, հասարակության ու պետության, մասնավորապես տարածքային կառավարման, ՏԻՄ-երի միջև առկա տարաձայնությունների հարթեցմանը, նոր ծրագրերի մշակմանն ու կոալիցիաների ձևավորմանը:

Սույն բուկլետը պատրաստվել և տպագրվել է Քաունթերփարթ ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի, և ԱՄՆ բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության No ALD-111-LA-10-00001 համագործակցության՝ DFD-A-00-09-00141-00 պայմանագրի շրջանակներում «Շիրակ կենտրոն» ՀԿ-ի միջոցով՝ «Աղետի գոտու անօթևան ընտանիքների իրավունքների պաշտպանություն, ինքնակամ բնակելի կառույցների օրինականացման կարգի մասին իրազեկող քարոզարշավ» ծրագրով:

Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետերը և կարծիքները պատկանում են հեղինակին՝ «Շիրակ կենտրոն» ՀԿ-ին, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետերի հետ:



«Շիրակ կենտրոն» ՀԿ
Շիրակի մարզ , 3104, Գյումրի, Վարպետաց 176,
301, 303, հեռ. (0312) 6-69-92,
Էլ. փոստ՝ info@shirakcentre.org
Վեբ կայք՝ www.shirakcentre.org

«ՇԻՐԱԿ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ



ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎ

Ծրագրի անվանումը

«Աղետի գոտու անօթևան ընտանիքների իրավունքների պաշտպանություն, ինքնակամ բնակելի կառույցների օրինականացման կարգի մասին իրազեկող քարոզարշավ»:

Ծրագրի իրականացման վայրը,
Ժամանակահատվածը

ՀՀ, Շիրակի մարզ, Գյումրի
2011թ. մայիս- 2011թ. սեպտեմբեր

Ծրագրի նպատակը և խնդիրները

Աղետի գոտու անօթևան, մասնավորապես բնակարան ստանալու հավակնորդ, ինքնակամ և ժամանակավոր կառույցներում բնակվող ընտանիքների իրավունքների և շահերը պաշտպանություն:

Նպաստել անօթևանության խնդիրների լուծմանը, շահառուների և իշխանությունների միջև առկա անվստահության մթնոլորտի ու հակասությունների նվազեցմանը:

Հիմնախնդիրը

Գյումրիում դեռևս կարևորագույն հիմնախնդիր է շարունակում մնալ տնակներում բնակվող մոտ 6800 ընտանիքների առկայությունը: Նրանցից անօթևանի կարգավիճակ ունեն և պետության կողմից բնակարանային փոխհատուցման ենթակա ընտանիքների հերթացուցակներում հաշվառված են միայն 3100-ը:

Երկրաշարժի պատճառով հարյուրավոր անօթևան ընտանիքներ, ովքեր շուրջ 20 տարի չստանալով բնակարաններ ինքնուրույն են լուծել իրենց կացարանի խնդիրը: Այդ պատճառով աղետի գոտում առկա են հազարավոր բնակելի տներ և ինքնակամ կառույցներ, իսկ Գյումրիում նույնիսկ մի շարք ամբողջական թաղամասեր, որոնց նկատմամբ բնակիչների գույքային իրավունքների իրավական ձևակերպումը մինչև օրս տրված չէ: Եվ դա՝ այն դեպքում երբ 2010 թ.-ին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է քաղաքացիների կողմից տնօրինվող բնակելիներն անվճար հիմունքներով օրինականացնելու հնարավորություն ընձեռող օրենք՝ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին»:

Ծրագրի համառոտ բովանդակությունը

Ինքնակամ բնակելի կառույցներում փաստացի բնակվող և դրանք տնօրինող ընտանիքների շրջանում բնակարանային իրավունքների և ինքնակամ կառույցների օրինականացման կարգի մասին իրազեկող քարոզարշավի իրականացում: Գյումրու անօթևանների հերթացուցակում հաշվառված և բնակարան ստանալու հավակնորդ շահառուներին իրազեկում բնակարաններ ստանալու համար ՀՀ կառավարության աղետի գոտու երկրաշարժից անօթևան ընտանիքներին բնակարանների բաշխման հանձնաժողովի կողմից պահանջվող փաստաթղթերի փաթեթների պատրաստման, վիճակահանությունների անցկացման վայրի և ժամկետների, հավաստագրերի բաժանման և բանալիների տրամադրման միջոցառումների մասին:

Իրենց ինքնակամ բնակելի կառույցներն օրինականացնելու ցանկություն ունեցող և բնակարան ստանալու հավակնորդ անօթևան ընտանիքներին խորհրդատվության տրամադրում և անմիջական աջակցություն բնակարանների բաշխման ու ինքնակամ բնակելի կառույցների օրինականացման գործընթացներին նրանց մասնակցության նպատակով:

